ԽՈՀԵՐ ԵՒ ՅՈՐԴՈՐՆԵՐ ՄԵԾԻ ՊԱՀՈՑ ՇՐՋԱՆԻ

(ՀԱՅՐԱՇՈՒՆՉ ԽՕՍՔԵՐ՝ ՄԵՐ ՍԻՐԵՑԵԱԼ ԺՈՂՈՎՐԴԻՆ)

Սիա մեր Մայր Եկեղեցին վերաբացել է իր ծիսական կեանքի մէջ քառասնօրեայ մի շրջան, որ կոչւում է Մեծ Պահք, ժողովրդական բառով՝ Մեծ Պաս կամ Պահեցողութեան Շրջան: Մեր Տիրոջ՝ Յիսուս Քրիստոսի Յարութեան հրաշափառ տօնից՝ Մեծ Զատիկից առաջ քառասուն օրերի վրայ տարածուող այս շրջանը Եկեղեցու հայրերը սահմանել են որպէս հոգևոր պատրաստութեան, ինքնամաքրման մի ժամանակ, որի ընթացքում մենք մեր անձնական ներքին կեանքը և անձից անձ փոխյարաբերութիւնները ինքնաքննութեան վերատեսութեան ենք ենթարկում: Մեծ Պահոց այս օրերին մեր Եկեղեցու աղօթքները, շարականները, Աստուածաշնչական ընթերցումները, Աւետարանի քարոզութիւնները կեդրոնանում են մեր անձի ներաշխարհի վրայ:

Այս շրջանում ընդհանրապէս մենք երեք կարգի հարցումներ ենք ուղղում մենք մեզ.

1. — Ո՞վ եմ ես իբրև անձ, ինչ էլ որ լինի իմ կենսավիճակը, դիրքն ու հանգամանքը, հոգևորակա՞ն, մտաւորակա՞ն, հա՞յր, մա՞յր, կաւա՞կ, ուսուցի՞չ, աշակե՞րտ, ուսանո՞ղ, արուեստագէ՞տ, վաճառակա՞ն, ճարտարագո՞ծ, պաշտոնեա՞յ, աշխատաւո՞ր, վինուո՞ր, հարո՞ւստ, բարեկեցի՞կ, աղքա՞տ, հիւա՞նդ, տարիքաւո՞ր, թոշակաւո՞ր: Ինչ էլ որ լինեմ ընկերային կեանքի այս կամ այն բնագաւառում՝ ե՞մ իսկական մարդ, հաւատարիմ՝ իմ աստուածաստեղծ բնութեանը, հաւատարիմ՝ Աստծու պատկերին, որ իմ մէջ է դրուել ինձ կեանք պարգևող Արարչի կողմից:

2. — Ե՞մ այն, ինչ ցանկանում եմ լինել իմ խղճի առաջ: Ե՞մ այն, ինչ Աստուած ուզում է, որ լինեմ:

3. — Եւ եթէ չեմ՝ ինչ՞ եմ անելու, որ լինեմ:

Չի կարող մարդ լինել և ամբողջական կերպով ու լիարժէք տարողութեամբ կատարեալ լինել, կատարելապէս սուրբ, բարի և անմեղ: Մարդ էակը իր բնութեամբ, Աստծու կողմից իրեն շնորհուած ինքնիշխան, ապատ կամքի բերումով յաճախ շեղւում է իր կոչման ուղիղ ճանապարհից և սայթաքում է, մեղք է գործում Աստծու դէմ, չարիք է հասցնում ինք իրեն և իր նմաններին: Նա, ով ինք իրեն անմեղ կը դաւանի՝ նա ինք իրեն Աստծու տեղ դրած կը լինի: Եւ սա մեղքերից մեծագոյնն է, ինքնահաճութիւն, ամբարտաւանութիւն, սին ինքնահպարտութիւն, որից առաջանում են բազում այլ մեղքեր:

Աստուածաշունչ մատեանում միշտ կարդում ենք ՄԵՂՔԻ մասին, այսինքն՝ Աստծուց հեռանալու այն փորձութիւնների մասին, որոնք այնքան յաճախակիօրէն պատահում են մեր կեանքում և խոովում են մեր կեանքը թէ՛ անհատական, թէ՛ ընտանեկան և թէ՛ հասարակական մակարդակների վրայ: Մեղքը՝ Աստծու կամքին հակառակ և մեր աստուածաստեղծ բնութեան անհաշտ արարքը՝ մի տեսակ անջրպետ է ստեղծում, մի ինչ որ պարիսպ է բարձրացնում մեր և մեր Արարչի միջև:

Եթէ մենք մոռացանք – և մոռանում ենք – մեր Արարչին, եթէ մենք

օտարացանք - և օտարանում ենք - մեր Աստծուն. Նա երբեք մեկ չմոռացաւ. մեկնից հեռու և օտար չմնաց - և չի՛ մոռանայ -, որովհետև մենք Իր արարածներն ենք, Իր սիրոյ ձեռակերտ էակները, Իր որդիները:

Աստուած մեկ հետ եղաւ միշտ, նոյնիսկ երբ մենք փորձեցինք Նրա հետ յինել: Նա Ինք Իրեն յայտնեց մեկի բակում եղանակներով և Իր յոյսը, սէրը միշտ արտայայտեց մեր նկատմամբ: Ամբողջ Հին Կտակարանում մենք տեսնում ենք, որ Աստուած չթողեց Իր ժողովրդին: Ժողովուրդը յաճախ անտեսեց Իրեն, ոսկի հորթի արձանը պաշտեց. Բայց Ինք նրան տուեց իր Տասնաբանեայ Պատուիրանները, ուղարկեց իր մարգարէները և բացաւ Իր կամքը Իր ժողովրդին, որպէսզի ուղիղ կեանքով երջանկութեան հասնի նա:

Երբ կարդում ենք Սաղմոսները, տեսնում ենք, թէ ինչպէս մարդ էակը կգում է Աստծու ծարաւը և դիմում նրան իր հոգևոր պապակը գոհացնելու համար: Նա աղերսում է.

«Աստուա՛ծ, Աստուա՛ծ իմ,
Ես վաղ առաւօտից Քե՛զ եմ ցանկանում.
Հոգիս ծարաւ է Քեզ,
Մարմինս՝ սառաւել ես Քո ծարաւն ունի.
Նման մի երկրի որ անապատ է և անջուր,
Ուր ճամբայ չկայ (ԿԲ. 2-3):

Մեր Եկեղեցու ժամերգութեան աղօթքների մէջ կայ մի աղօթք, որ բանալին է բոլոր աղօթքներին: Այնտեղ աղօթողն ասում է.

«Յամենայն ժամ աղաչանք իմ այս են՝
- Ի մեղաց իմոց՝ սո՛ւրբ արա զիս Տէր»:

Մարդի գերագոյն ձգտումն է մեղքի փուշից վերծ մնալ, որովհետև մեղքի խիթը բուժում չունի, առանց խոստովանութեան և առանց Աստծու թողութեան: Նա խոցոտում է մեր խիղճը: Կարող ենք մի անգամ, նոյնիսկ մէկից աւելի անգամներ, այս կամ այն ձևով պարտկել այն, մենք կմեկ ցոյց տալ անմեղ: Բայց ցոյց տալ մի բան է, լինելը՝ ուրիշ: Օրից մի օր այդ փուշը մեկ կ'անհանգստացնի, կը տառապեցնի անպայման, որովհետև նա խրուած է մեր խղճում և ոչ թէ մնում է սոսկ մեր յիշողութեան և կամ բանականութեան մէջ, ենթակայ մեր քմահաճոյքին կամ ցանկութեան:

Հակառակ մեր մեղանչումներին և սայթաքումներին, Աստուած մեկ չմոռացաւ և ոչ թէ միայն չմոռացաւ, այլ այնքան մեկ սիրեց որ մինչև անգամ իր Միածին Որդին ուղարկեց, որպէսզի մենք մեղքից փրկուենք, ինչպէս կարդում ենք Յովհաննու Աւետարանի մէջ:

Աստուածորդին՝ մարդ եղաւ, մեկ նման, իւրացրեց մեր մարդկային բնութիւնը (բացի մեղքից), որպէսզի մեկի ցոյց տայ մեղքից ազատուելու ճանապարհը և իսկական կեանքն ապրելու եղանակը երջանկութեան գոյավիճակով և կենսրնթացով: Երբ Նա ծնուեց Բեթղեհէմում, երկնքի հրեշտակները մի մեղեդի հնչեցրին ողջ աշխարհում.

«Փա՛ռք ի բարձունս Աստուծոյ
Եւ յերկիր խաղաղութիւն,
Ի մարդիկ հաճութիւն»

Նա եկաւ, որ մարդիկ խաղաղութիւն վայելեն իրենց կեանքում և հաճութիւն, այսինքն՝ փոխադարձ սիրոյ մէջ ապրեն և գործեն և ըստ այնմ իրար հետ վերաբերուեն:

Յիշո՞ւմ էք Յովհաննու Աւետարանի հենց առաջին գլխում պատմուած այն դրուագը, ուր Յովհաննէս Մկրտիչը երբ առաջին անգամ տեսաւ մարդացեալ Աստծուն՝ Յիսուսին, ասաց.

«Ահաւասիկ Գառն Աստուծոյ որ բառնայ զմեղս աշխարհի» («Ահաւասիկ Աստծու Գառը, որ վերցնում է աշխարհի մեղքերը» - Յովհ. Ա. 29):

Մեր Եկեղեցու սրբական հայրերը, կանոնականացեալ Սրբերը և սրբաշունչ ընտիր դէմքերը իրենք իրենց միշտ զգացել են մեղաւոր, որովհետև մարդ են եղել և մարդ լինելով մեղքը իրենց կեանքից դուրս չի եղել: Բայց նրանք կարողացել են մեղքը նուաճել և ընկճել իրենց ապաշխարողական սրբակեաց վարքով և գործով:

Մեր հայերէն Այբուբէնի գիւտարարը՝ Ս. Մեսրոպ Մաշտոց, իր գրած հոգևոր երգերում յաճախ ասում է.

«Մեղք իմ բազում են յոյժ,
Ծանր են քան զաւազ ծովու»:
«Վտանգիմ ի բազմութենէ մեղաց իմոց,
Աստուած խաղաղութեան օգնեա՛ ինձ:
Այեկոծիմ հողմով անօրէնութեան իմոյ,
Թագաւոր խաղաղութեան օգնեա՛ ինձ:
Ի խորրոս մեղաց ծովու տարաբերեալ ծփիմ,
Նաւապետ բարի փրկեա՛ զիս»:

Մեր մեծագոյն խորհրդապաշտ գրողը, հոգեսոյզ աղօթողը և ամենից սրբակեաց ճանաչուած անձը՝ Ս. Գրիգոր Նարեկացին, իր ամբողջ Աղօթամատեանում՝ "Նարեկ" անունով ծանօթ, ողբում է իր մեղանչական վիճակը և աղերսագին դիմում է ամենասուրբ և ամենողորմ Աստծուն, որ իր անկեալ վիճակից վեր բարձրացնի իր անձը, մաքրի իր հոգին: Մի փոքր նմոյշ մէջբերենք նրա բազում աղօթամրմունջ խօսքերից.

«Արդ, քանզի խօսել սկսեցի Քեզ հետ,
Որիդ ձեռքում է կենդանի շունչը
բազմամեղ հոգուս,
Ահից սահմռկած՝ սարսում եմ, դողում
սաստիկ տագնապից,
Քանզի Արարիչդ երկնի և երկրի,
Մտաբերումն իսկ Քո դատաստանի,
Անձողոպրելի, ահեղ, անաչառ,
Ուր յանցագործս պիտի կշտամբուի,
Անտանելի է, անսովոր, խօսքի
սահմաններից դուրս»:

Միւս երգաձայն աղօթողը՝ Ս. Ներսէս Շնորհալին, "Հաւատով խոստովանիմ" վերնագրով ծանօթ և ժողովրդից այնքան սիրուած և արտասանուած իր աղօթքների շարքում նոյն մեղանչական գոյավիճակն է արտայայտում պերճախօս և հոգեթով բառերով:

Ահաւասիկ մի նմոյշ նրա աղօթքների ոսկեշարքից. -

«Քննող գաղտնեաց,
Մեղայ քեզ կամաւ և ակամայ,
Գիտութեամբ և անգիտութեամբ,
Թողութիւն շնորհեա՛ մեղաւորիս,
Զի ի ծննդենէ սուրբ աւազանին
մինչև ցայսօր

Մեղուցեալ եմ առաջի
աստուածութեանդ քո
Զգայարանօք իմովք ամենայն անդամօք
մարմնոյս
Եւ ողորմեա՛ քո արարածոց
Եւ ինձ՝ բաղմամեղիս»:

Հարց եմ տալիս, ո՞վ ենք մենք, որ խոնարհական ոգով, ճշգրիտ և իրաւ ինքնաճանաչման անկեղծ քանքով կարողանանք մենք մեկ անմեղ նկատել և կարիքը չկգալ հոգեկան վերամաքրման մեր ներքին աշխարհի բիւրեղացման, մնալով կոյր և անկգալ մեր յանցանքների և մեղքերի նկատմամբ:

Եթէ մեղքը ներկայ է մեր կեանքում, ապա և ներկայ է նաև մեղքին յաղթելու, մեղքը չեկոքացնելու կարողութիւնը՝ կղջումի, խոստովանութեան, Աստծու շնորհի ներգործութեամբ մեր կեանքում: Քրիստոս ատում է մեղքը, բայց ո՛չ մեղաւորը, որովհետև մեղաւորին մէջ երբեք չի կորսուել, և չի կորսուում, Աստծու ներկայութիւնը: Մեծ Պահոց այս շրջանին մենք կոչուած ենք այդ աստուածային ներգործութեան ընդառաջել, տեսնել փուշն ու տատասկը, փոշին ու կեղտը, ընդվզել նրա դէմ, ափսոսալ, ընդունել, խոստովանել և որոշել նրան կոհ չգնալ: Սպաշխարութեան առաքինութիւնը ճիշտ այս արարքներով կը գտնի իր իսկական իմաստը. -

— Ճանաչել և ընդունել մեղքին քանդարար չարագործութիւնը մեր մէջ:

— Ափսոսալ, ընդվզել, կղջալ մեր գործած մեղքերի համար:

— Որոշել վերանորոգել մեր ներքին անձը, մաքրել մեր սիրտը, միտքը, կամքն ու հոգին.

— Բարիք գործել, ուրիշների - հանդէպ սէր ցոյց տալով և կարիքաւորին բարիք մատուցելով:

Մեծ Պահքի բուն իմաստը հոգևոր նկարագիր և տարողութիւն ունի: Որոշ տեսակի (մսեղէն, կաթնեղէն, հաւկթեղէն) կերակուրներից հրաժարուելը ինքնանպատակ չէ: Այդ ինքնապրկողութիւնը միջոց է հոգևոր ինքնամաքրման առաջնորդելու համար: Եթէ միայն որոշ տեսակի կերակուրներ ուտելուց հրաժարուենք և սակայն մաքուր բարոյական կեանք չապրենք, մոլութիւնների փոխարէն առաքինութիւններին տեղ չտանք մեր կեանքում, պահեցողութիւնը իր ճշմարիտ քրիստոնէական հարապատ իմաստին չի հասնի: Կարևորը կերակուրը չէ, այլ՝ կեա՛նքը, մա՛րդը, մարդկանց միջև սիրո՛ց, հաճութեա՛ն, բարութեա՛ն առաքինութիւններով յատկանշուող փոխյարաբերութիւնները:

Ես նկատել եմ, որ շատերի մէջ կայ այն մակերեսային մտայնութիւնը, որ խոնարհութիւնը, իր սեփական մեղքին ճանաչումը և ընդունումը և նրանց նկատմամբ ափսոսանքն ու կղջումը փոքրութիւն է: Մեծագոյն սխալներից մէկն է այդ ձևի մտածողութիւնը: Ընդհակառակը, այդ խոնարհութիւնը քաջութի՛ւն է, հոգեկան արիութիւն: Աստծու համար հաճելի մարդը այն չէ, որ ինք իրեն միշտ արդար է ճանաչում և ուրիշներին՝ մեղաւոր, այլ՝ այն անձը, որ ինք իրեն մեղաւոր է զգում և ձգտում մեղքից ազատուել ապաւինելով Աստծու ներողութեան և շնորհին: Բոլորդ էլ լաւ էք իմանում Աւետարանում Յիսուսի մեկի տուած պատկերը Փարիսեցիին և Մաքսաւորին առակի միջից: Նրանք երկուսը,

Փարիսեցին և Մաքսաւորը, տաճար էին գնացել աղօթելու համար: Փարիսեցին տաճարում ասում էր հպարտօրէն և բարձրաձայն.

— Ո՛վ Տէր, ես շնորհակալ եմ Քեզանից, որ ես նման չեմ ուրիշ մարդկանց, ինչպէս՝ յափշտակողները, անիրաւներն ու շնացողները, և կամ ինչպէս սա մաքսաւորը, այլ շաբաթը երկու անգամ ծոմ եմ պահում և տասանորդ եմ տալիս ամբողջ եկամտից:

Իսկ մաքսաւորը կանգնած էր մեկուսի և չէր իսկ կամենում իր աչքերը երկինք բարձրացնել, այլ ծեծում էր կուրծքը և ասում.

— Աստուած իմ, ների՛ր ինձ մեղաւորիս:

Յիսուս դարձաւ և իր առաքեալներին ասաց.

— Ասում եմ ձեզ, սա (Մաքսաւորը) իջաւ իր տունը արդարացած (վիճակով), ոչ թէ միւսը (Փարիսեցին), որովհետև ով որ կը բարձրացնի իր անձը, պիտի խոնարհեցուի և ով որ խոնարհեցնի իր անձը, պիտի բարձրացուի:

(Տես Ղուկասու Աւետարան, գլուխ ԺԸ. համարներ 10-14):

***

Ոչ միայն որպէս անհատ անձ, այլ նաև որպէս ազգ, հաւաքական անձ մենք պէտք ունենք վերանորոգման: Աշխարհում ո՛չ մի ազգ չի կարող խաղաղ ապրել և իսկական կարգացման և մեծութեան, առողջ տոկունութեան և ստեղծագործական նուաճումների հասնել առանց հոգևոր և բարոյական ներքին կօրութեան, ամուր նկարագրի և մաքուր կեանքի: Մեղքը, Աստծուց հեռացումը կ'աղքատացնի և կը տկարացնի այդ ազգին: Մենք այս դասն ենք սովորել մարդկութեան և մեր հայ ժողովրդի պատմութիւնից:

Ներկայումս մենք թևակոխել ենք մի նոր դարաշրջան մեր բազմադարեան պատմութեան մէջ: Ազատութեան և անկախութեան այս ժամանակներում, մեր ժողովուրդը ստիպողական և անմիջական կարիքն ունի քրիստոնէական հաւատքի, Քրիստոսի ապրած և քարոզած ճշմարտութիւնների, բարոյական սկզբունքների վերակենդանացմանը մեր ազգային համայնական կեանքում:

Դարերի ընթացքում շատ ոյժեր, հզօր իշխանութիւններ ուզեցին մեզ հեռացնել Քրիստոսի ճանապարհից, Աստծու իշխանութիւնից, մինչև վերջին եօթանասուն տարիներին խորհրդային բռնական տիրապետութեան ընթացքին: Շատ բան քանդեցին մեր հայրերի սուրբ աւանդութիւններից, բայց չկարողացան մեր քրիստոնէական հաւատքը պոկել մեզանից, արմատախիլ անել մեր հոգու խոր ընդերքից: Մեր ժողովրդի գիտակցութեան խոր ծալքերում կենդանի մնացին և խորհրդագործական առկայութեամբ արձագանգեցին 5-րդ դարի Վարդանանց քաջամարտիկ սերնդի կաւակների կեանքի նշանաբան եղող բառերը. —

«Այս հաւատքից մեզ ո՛չ ոք չի կարող խախտել, ո՛չ երկնքի հրեշտակները և ո՛չ մարդիկ, ո՛չ սուր, ո՛չ հուր, ո՛չ ջուր և ոչ էլ այլ հարուածներ որքան էլ որ դառն լինեն նրանք»:

Այո՛, հաւատքը մնաց կենդանի: Բայց, չմոռանանք, այդ հաւատքը տոկ զգացում չէ, այլ կեա՞նք է, ըմբռնողութիւն, ճանաչում, ապրելու, գործելու եղանակ է: Սոսկ սրտի կամ ուղեղի հարց չէ, այլ մեր մարդկային ամբողջ անձին, մեր էութեան, մեր գոյութեանը, մեր

կեանքին հետ անքակտելիօրէն շաղախուած: Մենք պէտք է ճանաչենք մեր Տիրոջ՝ Յիսուս Քրիստոսի մեկի կտակած և մեր հայրերի կողմից մեկի փոխանցուած այդ հաւատքի բարոյական ուսուցումները, կեանքի սկզբունքները, որոնց մէջ է թաքնուած երջանկութեան իսկական բանալին: Հարկ է, որ քրիստոնէութիւնը մեկ համար լինի կեանքի՝ ճանապարհ և ոչ թէ սոսկ գաղափար ու ձևական պաշտամունքի յատուկ կաղապարեալ, անհոգի աւանդութիւն: Քրիստոս ինք ասաց.

«Ե՛ս եմ կեանքի հացը»:

«Ե՛ս եմ ճանապարհը, ճշմարտութիւնը և կեանքը»:

Մեծ Պահոց քառասնօրեայ այս շրջանում եկէ՛ք, հաւատացեալներ, եկէ՛ք վերագտնենք, վերականգնենք, վերակենդանացնենք քրիստոնեայ հայի իսկատիպ կերպարը մեր անձերի և մեր ազգի մէջ, եկէ՛ք վերադառնանք քրիստոնէական կեանքի ճանապարհին, որ մեկ կը տանի դեպի հոգևոր և բարոյական առողջութիւն և երջանկութիւն: Ներանձնական ինքնախորհրդածական ապրումների այս պահերին, եկէ՛ք ուժեղացնենք մեր մէջ ԱՂՕԹՔԸ: Երբ աղօթում ես Աստծուն, եկեղեցու մէջ կամ տանը, չես կարող Նրա հայելու մէջ դու քեզ չտեսնել յստակ ու ջինջ: Եւ երբ տեսնենք մենք մեկ այդպէս յստակ ու ջինջ՝ անպայման այնտեղ պիտի գտնենք մեղքի բիծերը: Մաքրենք այդ բիծերը, որպէսզի մեր դէմքերը վերագտնեն իրենց աստուածադրոշմ պատկերը: Երբ վերացնենք և ջնջենք մեղքի բիծերը, այն ատեն կը գտնենք առողջ ու երջանիկ կեանքի ճանապարհը: Երբ աղօթում ես Աստծուն, չես կարող չարութիւն ու վատութիւն խորհել ուրիշի նկատմամբ, որովհետև Աստուած սէր է: Ուրիշի նկատմամբ միայն սէր ցոյց տալով կարող ես աղօթել Նրան, որի անունը ՍԷՐ է և չի ընդունի այլ աղօթք, բայց միայն սիրոյ բխմունք եղող խօսքը:

Ողջ աշխարհի քրիստոնեայ բոլոր Եկեղեցիները և ժողովուրդները, Ուղղափառ (Օրթոտոքս) լինեն թէ Կաթոլիկ կամ Բողոքական, բոլորն էլ մեծ արժէք և կարևորութիւն են տալիս Մեծի Պահոց այս շրջանին: Եթէ մենք ուղիղ հասկանանք մեր Հայց. Մայր Եկեղեցու հոգևոր, ծիսական աւանդութիւնները, անպայման պիտի տեսնենք և ըմբռնենք, որ մեր Առաքելական Սուրբ Եկեղեցին մեծ նշանակութիւն է տուել Մեծի Պահոց այս շրջանին և տալիս է նաև այսօր: Կարևորն այն է, որ մենք, որպէս մարդիկ, որքա՞ն կարևորութիւն ենք տալիս մեր անձերի և մեր ազգի առողջութեան և բարօրութեանը:

Վերանորոգե՛նք մեր սուրբ հայրերի արբարար աւանդութիւնը՝ Մեծ Պահոց այս քառասնօրեայ շրջանը վերածելու համար հոգևոր գարնան նման մի շրջանի տարուայ մեր կեանքում: Եւ երբ հասնենք Զատկայ տօնին, թող յարուցեալ Փրկիչը, որ իր յարութեամբը յաղթեց մեղքին և մահուան, մեր մէջ գտնի մեղքերից մաքրուած անձինք և բնակի մեր մէջ, որպէսզի յաղթական դուրս գայ մեր ազգը որպէս ճշմարտապէս քրիստոնեայ ազգ բոլոր տեսակի չարիքների դէմ:

Ողջ լերուք ի Տէր, կօրհնեալք շնորհօք Սուրբ Հոգւոյն, և յաւէտ օրհնեալ ի Մէնջ. ամէն:

ԳԱՐԵԳԻՆ Ա
ԿԱԹՈՂԻԿՈՍ ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ

25 փետրուար, 1998
Ս. Էջմիածին